ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾ ԳԱԳԻԿ ՂԱԶԱՐՅԱՆԻ ԱՐՎԵՍՏԻ ՎԱՂ ՇՐՋԱՆԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ռուզաննա Միքայելյան

1960-ական թթ. հայ կերպարվեստի քանդակի ասպարեզ իջած բազմաթիվ տաղանդաշատ արվեստագետների թվում իր առանձնակի տեղն ունի Գագիկ Ղազարյանը:

Ղազարյանի արվեստին նվիրված արվեստաբանական գրականության մեջ արվեստին նվիրված արվեստաբանական գրականության մեջ կան մի քանի տասնյակ մամուլի հրապարակումներ և նրա եղբոր՝ արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Վիգեն Ղազարյանի հեղինակությամբ ալբոմ, հրատարակված Երևանում, 2007 թվականին[1]:

Մամուլում հոդվածներով հանդես են եկել Ստ.Քալաշյանը, Է.Լևին, Կ. Սամվելյանը, Ջ. Տեր-Հակոբյանը, Վ. Ղազարյանը, Մ. Միքայելյանը, Լ. Գրիգորյանը, Ս. Մարգարյանը, Ս. Մանուկյանը, Ռ. Բաբայանը, Կ. Սամվելյանը, Ա. Աղասյանը, Ա. Ֆրիմերմանը, Ն. Մուրադյանը, Կ. Սամվելյանը, Ա. Կորզուխինը, Ն. Գիզլիջյանը, Վ. Սանթրյանը, Պ. Հայթայանը, Շ. Ռշտունին, Կ. Սամվելյանը և ուրիշներ:

«Մեր առջև բառիս բուն իմաստով կատարյալ դասական արվեստագետ է: Դասական երկու իմաստով՝ ակադեմիական վիրտուոզություն և մարդկանց (հատկապես կանացի) ու կենդանիների մարմնի մերկ կերպերի օրգանական կյանքի նկատմամբ գրեթե պաշտամունքի հասնող ակնածանք, որ հազվադեպ է հայ կերպարվեստում»[2]:

Գագիկ Ղազարյանը ծնվել է 1947 թվականին Երևանում, անվանի գրականագետ Հովհաննես Ղազարյանի ընտանիքում: Նկատելով որդու առաջին իսկ փորձերը քանդակի ու նկարչության ասպարեզներում, հայրը 1956-57 թթ. նրան ուղարկում է Երևանի Պիոներ պալատ, ուր նրա ուսուցիչն էր ընկեր Սոսը, միաժամանակ նաև՝ նորաբաց Հ.Կոջոյանի անվան նկարչական դպրոց, նշանավոր մանկավարժ նկարիչներ Ծովյանի ու Փիլոյանի մոտ: Վ. Ղազարյանի համոզմամբ այս հանգամանքն էլ նրան զգայուն դարձրեց ուրվագծի, լուսաստվերի ու տոնայնության նկատմամբ, ինչը նա պահպանեց ողջ կյանքի ընթացքում: Ա-

---

[1] Ղազարյան Վ., *Գագիկ Ղազարյան. Գծերի ու ձևերի աշխարհը*, 2007:

[2] Նույն տեղում :

վարտելով յոթնամյակը, Գագիկ Ղազարյանը նախընտրում է քանդակագործությունը: Նա աշակերտել է նաև Սուրեն Նազարյանին, որից բացի իր համար մեծ նշանակություն են ունեցել Արտաշես Հովսեփյանի հետ մշտական շփումները: Պատանեկան տարիներից պահպանված շատ ստեղծագործություններ աչքի են ընկնում բազմազանությամբ և վկայում տարբեր նյութերի նկատմամբ եղած նրա հետաքրքրության մասին: Պահպանվել են Գագիկ Ղազարյանի ամենավաղ ջրաներկ նատյուրմորտները, որոնք ներկայացնում են պատանու առաջին քայլերը առարկայի ուսումնասիրության իմաստով: Սրանք հիմնականում ուսուցողական նատյուրմորտներ են, ինչպես՝ «Նատյուրմորտ լամպով ու գավաթով», «Ծաղկամանով ծաղկեփունջ», «Կճուճով նատյուրմորտ», «Թեյնիկով նատյուրմորտ» և այլն: Ստեղծագործման բնույթն արտահայտող հետաքրքիր աշխատանք է ապակե տարայում վրձին, ներկ և գիրք պատկերող նատյուրմորտը: Պատանու ուսումնասիրությունների շրջանակը առարկայական ձևի ակադեմիական վերարտադրումն է, ծավալի, լուսաստվերի, մասամբ նաև տարածական խորության խնդիրները (**Գուն. պտկ. 22**): Սակայն նույնիսկ այս տարիներին տարբեր է պատանու պատկերային ձևը. ամենանուրբ երանգային անցումների թեթև հպումներից մինչև հագեցած գունային քսվածքներ: Ավելի ազատ, անկաշկանդ ու դինամիկ են ջրաներկ հորինվածքները, ուր նրան հետաքրքրում են լրացուցիչ գույների ավելի ինտենսիվ համադրությունները (ծովային և ձիապատկերային տեսարաններ):

Աներևակայելի բազմազան են Գագիկ Ղազարյանի ճեպանկարները: Նրանք առաձնանում են ոչ այնքան կառուցողական բնույթով, որքան պատանի արվեստագետի բավական դիպուկ դիտողականությամբ, որի արդյունքում կյանքի առօրեական ռիթմից «դուրս են բերվում» տիպականն ու առանձնահատուկը, խարակտերայինն ու հիշարժանը, գեղեցիկն ու հումորայինը: Միաֆիգուր, բազմաֆիգուր պատկերներում պատանու թեման մարդն է, նրա արտաքին հատկանշական տեսքը, անհատական խառնվածքը, շարժուձևը, կանգնած կամ նստած դիրքը, զրույցը, հանգիստը, շարժումը և այլն: Ղազարյանը պատկերում է նրանց դիմահայաց, կողքից, թիկունքից, առանձին ու խմբված: Գծի պլաստիկ արտահայտչականությունն ունի արդեն որոշակի վարպետություն, փափկություն ու ճկունություն:

Այս տարիների գրաֆիկական աշխատանքներում առանձնակի տեղ են գրավում թոշակառուների և գործազուրկների գլխապատկերները (**Գուն. պտկ. 23**): Տափակ գլխարկներով, նրանք «ուսումնասիրված» են Ղազարյանի կողմից բոլոր դիտակետերից: Նույնիսկ այն ռակուրսներում, որոնք հնարավորություն

չեն տալիս դեմքի ամբողջական զննմանը, նա շեշտում է ամենահատկանշական, բնութագրական կողմը՝ դեմքի օվալը, քիթը, աչքը: Գլխապատկերների «հատվածային» ֆորմատը ոչ միայն թերի չի թողնում կերպարային աշխարհը, այլև բացահայտում է նրա զարմանալիորեն խոր, սոցիալ-հասարակական, նույնիսկ հոգեբանական բովանդակայնությունը, որով առանձնանում է այս շարքը, նույնիսկ՝ ավելի տպավորիչ հետք թողնում դիտողի հիշողության մեջ:

Երիտասարդը իր ուժերն է փորձել նաև գրական խոսքի ասպարեզում: Այսպես, 16 տարեկանում «Պիոներ» մանկական ամսագրում լույս տեսավ նրա «Թե ինչպես ես անտոմս տուն հասա» պատմվածքը, «գրված աշխույժ, կենդանի ոճով, կարճ նախադասություններով, նուրբ հումորի ելևէջներով»[3]:

1962 թ. ցուցահանդեսից հետո արդեն պարզ էր, որ Գ.Ղազարյանը հակում ուներ դեպի հայ ժողովրդի անցյալը, բանահյուսությունը՝ հեքիաթների, լեգենդների, ժողովրդի հինավուրց ոգու աշխարհը: Մյուս կողմից Ղազարյանին հետաքրքրում էր արտիստի ստեղծագործական բարդ աշխարհը, նաև թեմայի գեղագիտական կողմը՝ կենդանի մարմնի գեղեցկությունը, նրա պլաստիկան, արտահայտչականության հնարավորությունների բազմազանությունը. բալետ, կըրկես: Թատրոնի արտիստներին ներկայացնող նրա կավճանկարներում (պաստել) մոտեցումը դեպի արտիստը նոր չէ, սակայն ևս մեկ անգամ ցուցադրում է Ղազարյանի նրբանկատությունն ու սուր դիտողականությունը դեպի մարդը, նրա իրնքնադրսևորման ու ստեղծագործական ձևերից մեկը: Նա կիրառում էր յուղաներկ, գուաշ, կավճամատիտ, ածխամատիտ, օգտվում կոլաժի, լինոփորագրության ընձեռած հնարավորություններից, ստեղծելով հատուկ գունամակերեսներ, հասնելով պլաստիկ արտահայտչականության բազմազանության:

Իր առաջին անհատական ցուցահանդեսը (1966թ.) Գագիկ Ղազարյանը կազմակերպել է Փանոս Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարանում, երբ ավարտում էր քանդակագործական բաժինը: Նա մեկն էր այն երջանիկներից, որն իր ստեղծագործական ուղու առաջին իսկ քայլերից արժանացավ ավագ ընկերների և ուսուցիչների դրական գնահատականին:

Այսպես է բնութագրում Գագիկ Ղազարյանի արվեստը Պողոս Հայթայանը. «Երիտասարդ քանդակագործին հատուկ են պլաստիկական հոգեբանական լուծումները, կոնստրուկտիվ-երկրաչափական խիստ ձևերով բնորոշվող ռելիեֆները, մարդկային բնավորությունների այլազանությամբ առանձնացող ռեալիստական հորինվածքները, հայ ազգային ժողովրդական քանդակագործության արտահայտչատարրերի ինքնատիպ վերակերպավորմամբ ստեղծված դիցաբա-

[3] Հովնանյան Ա., «Ակունքներից սերված», *Երեկոյան Երևան*, 5.03.1986

նական ու կենցաղային թեմաներով երկերը, որոնց մեջ մերթ շեշտվում է հզոր էներգիայով տոգորված ծավալաձևը, գծային հարթությունների դինամիկ փոխակերպումները, մերթ՝ զարդաձևերի սահուն անցումները»[4] (**Գուն. պտկ. 24 ա-բ**):

Գագիկ Ղազարյանի քանդակային առաջին փորձերը սկսվել են դեռ Երևանի Պիոներ պալատում սովորելու տարիներից: Փ.Թերլեմեզյանի անվան գեղարվեստական ուսումնարանում ուսանելու տարիներին Ղազարյանի վարպետությունն ավելի է կատարելագործվում: Բազմաթիվ ֆիգուրատիվ հորինվածքները դրա վառ վկայությունն են: Լենինգրադի գեղարվեստի ակադեմիայի ուսանելու տարիներին Ղազարյանը ստեղծում է բազմաթիվ քանդակային հորինվածքներ, որոնք ֆիգուրատիվ ժանրային թեմատիկ աշխատանքներ են: Սրանցում նկատվում է ուսանողի աստիճանական հմտանալու ընթացքը ինչպես նատուրայի ուսումնասիրման, այնպես էլ՝ փոքրածավալ հորինվածքային գործերում:

Հետագայում, Գագիկ Ղազարյանը պրոֆեսիոնալ կրթություն ստացավ Լենինգրադի Ռեպինի անվան ինստիտուտում անվանի քանդակագործ Միխայիլ Անիկուշինի մոտ: Լենինգրադի գեղարվեստի ակադեմիան Գ.Ղազարյանին անսահման հնարավորություն տվեց բնորդների ընտրության մեջ: Նա իր արվեստում նախապատվություն է տալիս նյութերի բազմազանության՝ փայտ, ներկած գիպս, թրծակավ, խեցեգործություն, շամոտ (հրակավ), քարատեսակներից՝ տուֆ, մարմար, բազալտ, ալեբաստր, մետաղներ, տարբեր նյութերի համակցություն:

1960-ականների սկզբի քանդակային ստեղծագործությունները վկայում են Գ.Ղազարյանի հետաքրքրությունների մասին դեպի համաշխարհային քանդակագործության լավագույն ավանդները, դրանց ուսումնասիրության, յուրօրինակ վերաիմաստավորման: Ուսումնական տարբեր առաջադրանքներում զգացվում է ֆիգուրի ազատ պլաստիկային տիրապետելու, դասական համաչափություններին, տարբեր ռակուրսների օգտագործումը, որոնք անկաշկանդ լուծումներ են ստանում տարեցտարի հմտացող երիտասարդի աշխատանքներում: Բազմազան են այս տարիների թեմատիկ փոքրածավալ հորինվածքները՝ միաֆիգուր և բազմաֆիգուր: Ծավալային գործերից բացի Գ.Ղազարյանը դիմում է նաև հայ միջնադարյան քանդակի ավանդներին՝ ռելիեֆային միակողմանի ընթերցման գործերի: Ուշագրավ է, որ Անիկուշինը թույլատրում էր ձևի որոշ դեֆորմացիաներ ի նպաստ արտահայտչականության և երիտասարդի մտահղացումների ավելի վառ դրսևորման: Քանդակագործի համար մեծ նշանակություն ունեցավ

[4] Հայթայան Պ., «Մտորումներ երիտասարդական կերպարվեստի շուրջ», *Գարուն*, 11,1976

Էրմիտաժը, որը երիտասարդ քանդակագործի մոտ հղկեց քանդակի կուլտուրան:

Ուսանողական տարիների ստեղծագործություններին ուշադրություն դարձնելով, արվեստաբան Մ.Միքայելյանը Գ.Ղազարյանի որոնումները տեսնում է սկսած հայ միջնադարյան քանդակից, հռոմեական դիմաքանդակից, եգիպտական և հելլենական քանդակից, հունական սափորանկարչությունից մինչև Սարյան, Դեգա, Լոթրեկ, Սյորա, Պիկասո, Մատիս, Արպ և Փոլլոք[5] (**Գուն. պտկ. 25 և 26**): Արդեն այդ տարիների քանդակային գործերում նա տեսնում է «իսկական քանդակային արժեք», նշելով «Ոսկան Երևանցին Աստվածաշունչը տպագրելիս», «Երեք սրբեր» հորինվածքը, նվիրված՝ Մաշտոցին, Խորենացուն և Շիրակացուն, «Քրիստոսը և տասներկու առաքյալները» ցածրաքանդակները, «Խորենացի» քանդակը, «Ընդհատակյա տպարանում», «Բիզոն» դրվագումները, «Գաղթականներ», «Լուսնային հովվերգություն», «Հովազները և ձին» աշխատանքները:

Վաղ շրջանի ստեղծագործական շրջանին է անդրադաձել նաև արվեստաբան Ա.Աղասյանը, որը քանդակագործի առաջին իսկ մասնակցություններից հանրապետական և միութենական ցուցահանդեսներին նկատել էր քննադատների ուշադրությունը երիտասարդ արվեստագետի վրա: Աղասյանը բնութագրում է Ղազարյանի գաղափարակերպարային և ոճական ծրագիրը, առաջին հերթին նշելով նրա սուր դիտողականությունը, մանրամասների և դետալների հանդեպ սևեռուն ուշադրությունը, պատմողականությունը, գրավիչ պատումի նկատմամբ տածած սերը, հումորի զգացումը, բանահյուսության և ազգագրական նյութի հետ վարվեցողությունը, միաժամանակ նաև՝ ստեղծագործական երևակայության ազատությունը, ոճավորողի անուրանալի շնորհքը: Անդրադառնալով Գ.Ղազարյանի կերպարային հերոսներին, արվեստաբանը նշում է, որ քանդակագործը իր հերոսներին գտնում է հասարակ ժողովրդի մեջ: «Դրանք անպաճույճ, զգացմունքներն անբռնազբոսիկ արտահայտող գյուղացիներն են կամ բնակիչներ երևանյան հին բակերի, ուր իշխում է ընտանեկանություն և բարիդրացիականություն, մարդկային մտերմիկ հարաբերությունների անկրկնելի շունչը»[6]: Այս թեմայի կապակցությամբ Աղասյանը հիշատակում է «Հիշողություններ Կոնդից» (**Գուն. պտկ. 27**), «Նկարչի այցը գյուղ» գործերը:

---

[5] Միքայելյան Մ., «Որոնումներն արդարացնում են», *Հայրենիքի ձայն*, 28.07.1962:

[6] Աղասյան Ա., «Քանդակագործ Գագիկ Ղազարյան. ճանապարհ դեպի մեզ», *Երեկոյան Երևան*, 36.07.1989:

Հաջորդ դիտարկված աշխատանքը «Էրեբունի» (1988) գործն է, կատարված Երևանի համանուն հյուրանոցի համար: Արվեստաբանն այն բնորոշում է որպես ծավալապատկերային հարթաքանդակ: Թեման լուծված է ընդհանրացված-խորհրդանշական ձևով: Պատկերի ֆոնը նմանակում է հինարևելյան և հայ միջնադարյան ճարտարապետության մեջ կիրառվող քարի զուսպ շարվածք, որը ստեղծագործությանը հաղորդում է խստաշունչ-առնական, մոնումենտալ բնույթ: Հզոր մույթին մոտ տեղադրված էր Արգիշտի արքայի քանդակը, որն ըստ հեղինակի նախնական մտահղացման, ձեռքերում պետք է բռնած ունենար ամրոցի հիմնադրումն ավետող սեպագիր արձանագրությունը: Կամարային բացվածքի երկու կողմերում տեղադրված են եղել մոտ երկու տասնյակ քանդակներ, որոնց մեջ առանձնացել են մարտակառքերով իրար ընառաջ ելնող արքայական զույգի և զորահրամանատարների պատկերները, որոնց ողջունում էին շինականներն ու զորքը (**Գուն. պտկ. 28**): Հորինվածքը նվիրված է եղել հայկական պետականության հնագույն ժամանակահատվածներից մեկին: Արվեստաբանը նմանեցնում է այն բեմադրված միզանսցենների հետ:

Ուշագրավ է Գագիկ Ղազարյանի կողմից քրիստոնեական պատկերագրության յուրօրինակ, կարելի է ասել մի կողմից քողարկված, մյուս կողմից՝ արվեստի տեսանկյունից ակնհայտ կիրառումը խորհրդային ժամանակաշրջանի ամենատարածված, սոցռեալիզմին հատուկ, հաճախ՝ պարտադրված թեմայում: Այս բանը նկատել է արվեստաբան Պողոս Հայթայանը՝ Գ.Ղազարյանի «Կոլխոզ են գրվում» բազմաֆիգուր կոմպոզիցիայի հիմքում տեսնելով «Խորհրդավոր ընթրիք» թեմայի դասական կառուցվածքը[7]:

Դեռ երիտասարդ տարիներին Գագիկ Ղազարյանը քանդակային ստեղծագործությունների համար ընտրում էր ամենատարբեր նյութեր, յուրաքանչյուր դեպքում կիրառելով համապատասխան տեխնիկական հնարներ, հասնելով առանձնահատուկ արտահայտչականության (**Գուն. պտկ. 29**):

Նրա ոճական առանձնահատկությունների համար մեծ ազդեցություն ունեցավ նաև շամոտը: Ցանկացած պատկերում, ինչպես, օրինակ, ծաղկամոտիվում, երևում են դետալային մանրամասն մշակումներ: Կավի ընձեռած հնարավորություններն դրանք ավելի դյուրին են դարձնում: Գագիկ Ղազարյանի շամոտե աշխատանքներում այդ նյութը հասավ գեղարվեստական մակարդակի, ձեռք բերելով յուրահատուկ արտահայտչականություն:

Քանդակին նախապատվություն տալով դեռևս երիտասարդ տարիքում, Գագիկ Ղազարյանը տարեցտարի հարստացրեց իր ստեղծագործական դրսևո-

[7] Հայթայան Պ., «Մտորումներ երիտասարդական կերպարվեստի շուրջ», *Գարուն*, 11. 1976:

րումները նորանոր գեղարվեստական խնդիրներով, ստեղծելով մի արվեստ, որի պրոֆեսիոնալիզմն ու արդիականությունը դիտողի մոտ արթնացնում են ամենատարբեր հույզեր ու մտորումներ, ինչպես՝ պատմական հիշողություն, ազգային հպարտություն, անմիջականություն, գեղագիտական ընկալում և այլ բազում զգացմունքային նրբերանգներ, աննկատ թողնելով բազմամյա այն քրտնաջան տքնությունն ու նվիրվածությունը, որոնց շնորհիվ քանդակագործի ստեղծագործական մտահղացումներն արտահայտվում են բարձր վարպետությամբ, վիրտուոզ թեթևությամբ: Սրա շնորհիվ է, որ Ղազարյանի արվեստն ընկալվում է անմիջական ու մարդկային. «Նա ստեղծում է քարում կենդանի, ջերմ և անկըրկնելի աշխարհ»[8]: Ստեղծագործական պարզություն որն բովանդակային ու հուզական հարստությամբ Գագիկ Ղազարյանի ստեղծագործությունը դասում է բարձր արվեստին: Գ.Ղազարյանի արվեստը սինթեզում է հայ բազմադարյան և համաշխարհային, այդ թվում ռուս-խորհրդային արվեստը՝ համադրելով ազգային և համաշխարհային արվեստների լավագույն ավանդները:

[8] Фримерман А., «Поэтический теплый мир», *Комсомолец*, 10.02.1987.

Ամփոփում

ОСОБЕННОСТИ РАННЕГО ТВОРЧЕСТВА СКУЛЬПТОРА ГАГИКА КАЗАРЯНА

Рузанна Микаелян

Искусство Г.Казаряна синтезирует традиции армянского многовекового и всемирного, в том числе русско-советского искусств, сочетая древнейшие национальные каноны и приемы, особенности одностороннего и двухстороннего рельефов с профессионально-пластическим пониманием вопросов современной художественной выразительности. Вдохновляемый самой жизнью, скульптор не перестает удивлять жизнерадостностью восприятия мира - человека, природы, мажорно-позитивным переосмыслением бытия. Взгляд художника охватывает окружающий мир в своем невероятном многообразии с точки зрения зрелого философского осмысления, мудрости мастера, в то же время восторгаясь деталями, обогащающими образно-символическое восприятие зрителя.

Творчество скульптора глубоко связано с национальной историей, мифологией, фольклором, символикой, наиболее ярко отражающими дух народа, его самобытную и созидательную силу.

GAGIK GHAZARYAN'S EARLY ART FEATURES

Ruzanna Mikaelyan

The art of G. Ghazaryan synthesizing the armenian, soviet and world arts, mixing the standatrs and methods of old and contemporary masters, combining particularities of unilateral and bilateral reliefs and professional expressiveness of contemporary artistic movements. Inspired by real life, the artist does not cease to amaze the cheerful vividness of human nature's life with everyday major, positive reconsiousness: The sculptor's art is deeply connected to the history, mythology, folklore, symbols, that are the most striking reflections of the people's spirit, human's unique and creative spirit.